

## ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

(համառոտ ակնարկ)

*Արփենիկ Ղազարոսյան, Լուսինե Թումանյան*

Նախիջևանի տարածաշրջանը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից է, ինչը հաստատվում են հնագիտական պեղումները: Հազարամյակների պատմություն ունեցող այս տարածաշրջանում հայ ժողովուրդը կերտել է բազմապիսի և բազմաշերտ մշակույթ: Այստեղ առկա են հայկական մշակույթի բոլոր տարատեսակները սկսած ժայռապատկերներից մինչև ուշ միջնադար՝ Նավասար լեռնագագաթի ժայռապատկերները, Շահապոնքի «Քարե տուն» հնամենի բնակատեղին, Մոխրաբլուրի և Շարուրի (Շորթափա) հնավայրերը, Կարմիր վանքի բրոնզեդարյան դամբարանադաշտը: Դրանց պեղումների ժամանակ հայտնաբերվել են տարբեր ծիսապաշտամունքային իրեր՝ քանդակներ, տարատեսակ խեցեղեն, ինչպես նաև աշխատանքային գործիքներ և այլ իրեր: Նախիջևանը հետաքրքրություն է ներկայացնում նաև հայ բանահյուսության տեսակետից. պատմահայր Մովսես Խորենացին բացառիկ դեր է վերապահում Գողթան երգիչներին: Նախիջևանը հարուստ էր նաև քրիստոնեական մշակույթով՝ միջնադարյան բնակատեղիներ, ճարտարապետական արժեք ներկայացնող վանքեր և եկեղեցիներ, որմնանկարներ, հազարավոր խաչքարեր... Նախիջևանյան վանքերին կից գործող գրչության կենտրոններում դարեր շարունակ հայ գրիչներն ու մանրանկարիչները գրել և ծաղկել են տարբեր բովանդակություն ունեցող մատյաններ:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել այսօրվա Նախիջևանի մարզից մեզ հայտնի ձեռագրական ժառանգությունը և դրա մասին վկայությունները: Գրչության կենտրոններ են գործել Նախիջևան (Նախճավան), Ագուլիս, Զուղա (Հին), Աստապատ քաղաքներում, Կուքի, Նորաշենիկ, Աղբին գյուղերում, Շոռթի, Շահապոնքի և Ապրակունիսի վանքերում, Քոնայի հայ ունիթորական վանքում և այլուր: Համառոտաբար անդրադառնանք դրանց գործունեությանը՝ ցույց տալու համար նախիջևանյան ձեռագրաստեղծման արվեստի յուրահատկությունները:

**Նախիջևան քաղաքի** գրչության կենտրոնը մեկն է հայկական շուրջ

երկու հազար խոշոր և բեղուն գրչության կենտրոններից:

Մեզ հասած ամենավաղ ձեռագրերը XIV դարից են, դրանք գրվել են Հակոբ գրչի ձեռքով: 1304 թվականին Հակոբ գրիչը Ավետարան է ընդօրինակել, որը նկարազարդվել ու կազմվել է մոտակա Աստապատի վանքում՝ Սիմեոն ծաղկողի ձեռքով (ՄՄ, ձեռ. 3722). «Բայց գրեցաւ սայ ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջեան Մեծն նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր, եւ կատարեցաւ նաղաշութիւն սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցեալ, առ ափն հեզաշարժ եւ ծիածաւալ գետոյս Երասխայ: Եւ որք հաիք ի սա, թողութիւն մեղաց խնդրեցէք գծողի սորա՝ Յակոբայ: Ո՛հ, ո՛յ, այո՛յ, այո՛յ, աղաչեմք յիշեալ ի բարի մասին զծաղկողն եւ զկազմողն՝ զՍիմէոն ասեմ, հեզ եւ հանդարտ կրանաւոր եւ բաշխող Գառինն անարատ մարմնոյ Տեառն, զի բազում աշխատեցաւ»<sup>1</sup>: Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 364 թերթ: Այն ունի յուրահատուկ նկարազարդում, հատկապես ուշագրավ են խորանների գլխազարդերը, որտեղ պատկերված են մարդկանց դեմքեր, և Մուտք Երուսաղեմ տերունական պատկերը, կան նաև ավետարանիչների պատկերներ և բազմապիսի լուսանցազարդեր:

1306 թ. նույն Հակոբ գրիչը «ի Նախիջեան, ընդ հովանեաւ Սուրբ Սարգսիս» ընդօրինակում է Եկեղեցու հայրեր Նեղոս ճգնավորի և Եփրեմ Ասորու երկերը բովանդակող մատյան (Նոր Ջուղա, ձեռ. 405)<sup>2</sup>: Այս ժամանակաշրջանում Նախիջևանում գործել է նաև գրիչ Հովսեփ քահանան: Նրա ընդօրինակությամբ մեզ հայտնի են 1319 թ. և 1324 թ. Ավետարանները (ՄՊԲ, Ռուսական ազգային գրադարան, ձեռ. 48, երկրորդի գտնվելու տեղն անհայտ է)<sup>3</sup>:

Այս դարաշրջանում Նախիջևան քաղաքում հոգևոր և գիտական գործունեություն են ծավալել նաև հայ միարարները: Նախիջևանի մոտ

<sup>1</sup> ՄՄ, ձեռ. 3722, 358ա: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2018, 64-65:

<sup>2</sup> Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, թիւ 406, ձեռագրի համարը Սուրբ Ամենափրկիչ վանքում՝ 66, կազմ.՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 608-609: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 105-106:

<sup>3</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 378: Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմ.՝ Ե. Լալայեան, թիւ 86, Թիֆլիս, 1915, էջ 169-170: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 477-478:

էր գտնվում նրանց հոգևոր կենտրոններից Քոնայի Սբ. Աստվածածին վանքը (տե՛ս ստորև): Պահպանվել և մեզ են հասել հայ միարարների ընդօրինակած մատյաններ: Դրանցից է 1383-1384 թթ. մատյանը, որը բովանդակում է Թովմա Աքվինացու «Յաղագս տնօրենութեանն Քրիստոսի» գործը (ՄՄ, ձեռ. 68): Մատյանի հիշատակարանում Հովհաննես և Մաթևոս գրիչները դառնությամբ են գրում քաղաքում տարածված համաճարակի մասին. «Մեծ հոգս եղև ինձ այս տարի, / Մահտարածամս յերկիրս կու ընկնի, / Նախիջևան քաղաք կու անցանի, / Կու մեռանին շատ դարիպնի»<sup>1</sup>:

Նախիջևանում ձեռագրեր են ընդօրինակվել նաև ուշ շրջանում, ինչպես օրինակ Հովհաննես արեղայի 1731 թ. մատյանը (ՄՄ, ձեռ. 8043):

**Ագուլիսի** գրչակենտրոններում առանձնանում է Սբ. Թովմա առաքյալի վանքը: Այստեղից մեզ հայտնի վաղագույն մատյանը 1375 թ. Վարդան գրչի ընդօրինակած Նարեկն է (ՄՄ, ձեռ. 1571). «Գրեցաւ տառս աստուածահին ընդ հովանեաւ Սուրբ Թումաիս, որ է վանսն ի յԱգուլիս, ընդ իշխանութեան տէր Զաքարիահին, որ հայրապետ է Գողթան գաւառին, ի Հայոց թուականին ՊԻԴ (1375)-ին»<sup>2</sup>:

Ագուլիսի գրչատները, այդ թվում՝ Թովմա առաքյալի վանքը, ընդլայնել են իրենց գրչական գործունեությունը XV դարում՝ Հակոբ րաբունապետի ջանքերով<sup>3</sup>: Մեզ են հասել XIV-XVII դարերում ընդօրինակված, ծաղկված, կազմված կամ նորոգված բազմաթիվ ձեռագրեր, որոնք աչքի են ընկնում բովանդակային բազմազանությամբ: Հայտնի են Մատթեոս գրչի 1425 թ. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»ը<sup>4</sup>, նույն գրչի 1447 թ. Տոնականը<sup>5</sup>, Թումա գրչի 1432 թ. ընդօրինակած Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը»<sup>6</sup>, Հովսեփ գրչի 1486 թ.-ի Գանձարանը<sup>1</sup> և 1493 թ.-ի

<sup>1</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաքյան, Երևան, 1984, էջ 281-282:

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմ.՝ Օ. Եգանեան, Երևան, 2009, էջ 515:

<sup>3</sup> Հայ գրատպություն և գրքարվեստ հանրագիտարան (խմբ. Հովհաննես Այվազյան), Երևան, Հայկական Հանրագիտարան Հրատարակչություն, 2015, էջ 21:

<sup>4</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 337:

<sup>5</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 604-605:

<sup>6</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 423:

Մաշտոցը (ՄՄ, ձեռ. 6450)<sup>2</sup>, Անանիա գրչի Ավետարանը (ՄՄ, ձեռ. 6846) և այլ մատյաններ: 1504 թ. Սբ. Թովմայի վանքում Ավետարան է ընդօրինակում Հովսեփ արեղան (ՄՄ, ձեռ. 6819)<sup>3</sup>:

XVII դարասկզբին (1603/4 թ.) Շահ Աբասի կազմակերպած մեծ բրոնազադթի պատճառով Նախիջևանը բավականին ամայանում է, անկում է ապրում նաև գիտական և մշակութային կյանքը: Այնուհանդերձ, բռնագաղթից փրկված հայությունը կարողանում է շարունակել մշակութաստեղծ գործունեությունը՝ նորոգելով վանքեր, ստեղծելով ձեռագրեր: XVII-XVIII դարերից բավականին ձեռագրեր են պահպանվել: Թովմա առաքյալի վանքում 1668 թ. ժողովածու է ընդօրինակում Գրիգոր քահանան (ՄՄ, ձեռ. 705), 1671 թ. ժողովածու են ընդօրինակում Սահակ, Սարգիս և Ղազար քահանա գրիչները (ՄՄ, ձեռ. 497): Հայտնի են Ագուլիս քաղաքում և Թովմա առաքյալի վանքում ընդօրինակված մի շարք ձեռագրեր՝ 1637 թ. Գրիգոր դպիրի ժողովածուն (ՄՄ, ձեռ. 6496), 1639 թ. Մարտիրոս գրչի ժողովածուն (ՄՄ, ձեռ. 7087), 1676 թ. Ստեփանոս կրոնավորի Տոնացույցը (ՄՄ, ձեռ. 7177), 1719 թ. Խորհրդատետրը (ՄՄ, ձեռ. 4497), 1723 թ. Թովմա գրչի ժողովածուն (ՄՄ, ձեռ. 1836) և այլն:

Հաջորդ նշանավոր գրչության կենտրոնը **Շոռոթն է**: XVII դարում այստեղ եկեղեցական և գիտամշակութային կյանքը մեծ վերելք է ապրել, որի արդյունքում ստեղծվել են բազմաթիվ մատյաններ: Վաղ շրջանի ձեռագրեր մեզ հայտնի չեն, պահպանվածները XVII դարի ընդօրինակություններ են: Դրանցից են 1631 թ. և 1643 թ. Հովհաննես գրչի ընդօրինակած ժողովածուները (ՄՄ, ձեռ. 3138, ՄՄ, ձեռ. 779), Բագարատ դպիրի 1649-1651 թթ. Ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնութիւնը» (ՄՄ, ձեռ. 1528) և նույն գրչի 1648 թ. Ճաշոցը (ՄՄ, ձեռ. 7422), Մանկասար գրչի 1649 թ. Հայսմավուրքը (ՄՄ, ձեռ. 4546), Անդրեաս գրչի 1649 թ. Աստվածաշունչը (ՄՄ, ձեռ. 4905), Սարգիս գրչի 1667 թ. Ավետարանը

<sup>1</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 82-83,

<sup>2</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 194-195:

<sup>3</sup> Այստեղ և այլուր Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերի տվյալները տես Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1965: Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1970:

(ՄՄ, ձեռ. 5362), Թադեոս և Ալեքսան դպիրների 1667-1668 թթ. Աստվածաշունչը (ՄՄ, ձեռ. 3545), Մարգար դպիրի 1657 թ. Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը (ՄՄ, ձեռ. 5875) և նույն գրչի 1679 թ. Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 4418), Գաբրիել քահանայի 1692 թ. Հայսմավուրքը (ՄՄ, ձեռ. 7472):

**Շոռոթի Սբ. Աստվածածին վանքում** Վարդան քահանան 1631 թ. նորոգելով Սբ. Աստվածածին վանքը՝ հիմնում է կուսանաց միաբանություն: Այդ մասին վկայություն կա նրա որդի Հովհաննես վարդապետի ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում (ՄՄ, ձեռ. 3138): Մենաստանի մայրապետը եղել է Վարդան քահանայի քույր Մարիամը, միանձնուհիներ են եղել քահանայի երկու դուստրերը. «Արդ, աղաչեմ զձեզ, սիրովն Քրիստոսի, ո՛վ լուսերամք դասք քահանայից եւ մանկունք սուրբ եկեղեցոյ, յիշեսցիք ի մաքրափայլ աղօթս ձեր միով Հայր մեղայի եւ Աստուած ողորմի ասելով զհայրն իմ՝ զտէր Վարդանն, որ մեծաւ ջանիւ եւ բազում աշխատութեամբ շինեաց զսուրբ անապատս ի հալալ արդեանց իւրոց՝ եթէ պահսպ, եթէ եկեղեցին, եթէ տնտեստուն, խուցք եւ հիրատուն եւ այլ շինութիւնք, եւ ժողովեաց բազում կուսանս ի սմա, եւ հաստատեաց անապատ ի ժամանակս Մովսէս կաթողիկոսին, թվին ՌՁ (1631)»: Այս կուսանաց վանքում գրչությամբ են զբաղվել նաև Կիրակոս քահանայի դուստր Մարգարիտը, Գոհարի միանձնուհին: Մաշտոցի անվան Մատենադարանում են պահվում 1648 թ. Մարգարիտի ընդօրինակած Նարեկը (ՄՄ, ձեռ. 5921), 1662 թ. Ժամագիրք և Պարզատոմար բովանդակող մատյանը (ՄՄ, ձեռ. 7162), Գոհարինե միանձնուհու 1659 թ. Նարեկը (ՄՄ, ձեռ. 11033) և այլ մատյաններ:

Նախիջևանի հնագույն բնակավայրերից և նշանավոր գրչության կենտրոններից է եղել **Ջուղան**: Այն ծաղկուն բնակավայր էր՝ հայտնի իր վանքերով, խաչքարերով և ձեռագրերով: Ջուղայից պահպանվել և մեզ են հասել մի քանի տասնյակ ձեռագրեր: Վաղագույններից է 1325 թ. Խաչատուր քահանայի ընդօրինակած Ճաշոցը (ՄՄ, ձեռ. 6235): Ջուղայից մեզ հայտնի ձեռագրերից է 1456 թ. Մարիամ գրչի գրած և ծաղկած ձեռագիրը՝ Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը<sup>2</sup>:

Ջուղայի գրչության կենտրոնի բեղուն շրջաններից է XVII դարասկիզ-

<sup>1</sup> ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 433:

<sup>2</sup> **Այվազյան Ա.**, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 87:

բը, որը սակայն ընդհատվում է Շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթի պատճառով: Բռնագաղթի հետևանքով բազմաթիվ գրիչներ և ծաղկողներ վերաբնակվել են Սպահանում և շրջակայքում՝ այնտեղ շարունակելով իրենց ընդհատած աշխատանքը: Ուստի և այս ժամանակաշրջանում գրված ձեռագրերի հիշատակարանները լեցուն են բռնագաղթին վերաբերող տխուր փաստերով: Ջուղայում 1603 թ. գրիչ Բարսեղ Աղբակեցին սկսում է մատյանի ընդօրինակություն՝ Իգնատիոս Սևլեռնցու «Մեկնութիւն Ղուկասու» գործը, և հիշատակարանում սրտի կսկիծով է գրում. «Ի մեծ թվականի Հայոց Ռ եւ Ծ-երորդի եւ երկրորդի (1603), ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում ազգն Պարսից շարժեցան զօրօք յերկիրս Հայոց եւ բազում առ եւ ասար արարեալ դարձան ի Դավրէժ եւ Ատրպատական» (ՄՄ, ձեռ. 8243):

Նույն տխուր իրողությունն է ողբում Հակոբ քահանա Ջուղայեցին 1607 թ. իր ընդօրինակած Ավետարանում, որը գրչագրել էր արդեն գաղթից հետո Սպահանում. «Եկն թագաւորն Պարսից Շահ Աբաս անուն, այսպիսի անողորմաբար աւեր էած եւ արար աղմուկ յոյժ, եւ հրաման սաստիկ եղեն թագաւորին, որ բռնութեամբ աւերէր, մանաւանդ Ջուղայոյ Խիզան, լալով, կամակոր աչաք, խղճուկ եւ տարակուս դիմաք, ոմն բոբիկ եւ եղուկ ասելով, ոմն տղայն ի գիրկն աւաղ ասելով, ողբն բազում է, ձանձրանալոյն մեք ոչ գրեցաք, առաւ զմեզ երբեր մինչ ի Շաւշ քաղաքն, որ կոչի Ասպահան, եւ եղաք նոր քաղաք եւ նոր շինուածք, եւ կոչեցաւ Նոր Ջուղայ»<sup>2</sup>:

**Ապրակունիսում** ևս գործել է խոշոր գրչության կենտրոն: Մինչ Աբ. Կարապետ վանքի հիմնադրումը հայտնի էին Աբ. Սարգիս և Աբ. Խաչ վանքերը և նրանց գրչատները: 1379 թ. Կարապետ և Հակոբ գրիչները ընդօրինակում են Աստվածաշունչ (ՄՄ, ձեռ. 159). «Թվ[ի]ն] ՊԻԸ (1379) գրեցաւ ի գեօղս Ապրակունեց, ի դրան Սուրբ Սարգսի, ի յաւորս Մաղ[ա]ք[ի]ա ճգնաւորի»<sup>3</sup>:

1381 թ. Մաղաքիա Ղրիմեցու նախաձեռնությամբ Սարգիս Ապրակունեցին, Հովհան Որոտնեցին և վերջինիս աշակերտ Գրիգոր Տաթևացին

<sup>1</sup> ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, 99:

<sup>2</sup> Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, թիւ 105, ձեռագրի համարը Սուրբ Սարգիս եկեղեցում՝ 396, էջ 149-151:

<sup>3</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 648:

այնտեղ հիմնում են Սբ. Կարապետ վանքը և Ապրակունիսի Սբ. Խաչ վանքի դպրոցը տեղափոխում են այնտեղ՝ վերածելով այն բարձր տիպի դպրոցի: Ապրակունիսում 1391 թ. Մատթեոս վարդապետ Ջուղայեցին, ով եղել է նախ Հովհան Որոտնեցու, ապա Գրիգոր Տաթևացու աշակերտը, հեղինակում է Գործք առաքելոցի մեկնություն, որը հասել է ինքնագիր օրինակով (ՄՄ, ձեռ. 2519): XIV դարից հայտնի են Հովհաննես գրչի ընդօրինակած Ավետարանը, 1590 թ. (ՄՄ, ձեռ. 2805) և այլ մատյաններ:

Գրչական գործունեությունը նոր վերելք է ապրում XVII դարում՝ Ղազար և Եսայի վարդապետների ռաբունապետության տարիներին<sup>2</sup>: 1642 թ. Եսայի վարդապետ Մեղրեցու (Կարճավանեցի) պատվերով Հովհաննես գրիչն ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու մեկնությունները (ՄՄ, ձեռ. 1294): 1652 թ. Շմավոն վարդապետը «ընդ հովանեալ գեղապանձութեամբ շքեղացեալ տանս մեծի եւ տիեզերահոջակելի մենարանիս, որ Ապրակունեաց Սբ. Կարապետ յորջորջի եւ գահ երիցութեան նահանգիս բոլորից Նախճուանայ եւ Երնջակոյ» կազմում է Նարեկ աղոթագիրք՝ հիշատակարանում նշելով Սբ. Կարապետի առաջնորդներին և մեծ վարդապետներին՝ Եսայուն և Առաքել Շոողթեցուն (ՄՄ, ձեռ. 3589)<sup>3</sup>:

**Աստապատի** Սբ. Վարդան եկեղեցում և Սբ. Ստեփանոս (Կարմիր) վանքում գործել են գրչության կենտրոններ: Սբ. Վարդան եկեղեցու գրչակենտրոնից մեզ հասած առաջին ձեռագիրը Առաքել գրչի 1269 թ. Ավետարանն է «ի յԱստապատ, ի հովանեալ Սուրբ Վարդանիս, յաւուրս գարնայնոյ, որ գայր գետս դարիւ եւ դարիւ, լի փխացեալ» (ՄՄ, ձեռ. 382)<sup>4</sup>: 1318 թ. Խաչատուր Երզնկացին ավարտում է մի մեծադիր Ճաշոց մատյանի գրությունը (ՄՄ, ձեռ. 6301). «ի գեղս Աստապատ, ընդ հովանեալ Սրբոյ զինաւորի եւ մեծ վկային Քրիստոսի Վարդանայ, ի հայրապետութեանն Հայոց տեառն Կոստանդեայ Կիսարացոյ, եւ ի վերադիտողութեան մերոյ՝ սրբոյ լուսաբնակ մենաստանիս Սրբոյ Նախավկային

<sup>1</sup> Այվազյան Ա., Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978, էջ 82:

<sup>2</sup> Այվազյան Ա., Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 83:

<sup>3</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, մասն Գ, կազմ.՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 492:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երևան, 1984, էջ 325:

Ստեփաննոսի եւ այլ համագումար մարտիրոսաց վկայելոց ի Քրիստոս»<sup>1</sup>:

Մեծաթիվ են հատկապես XVII-XVIII դարերում Սբ. Ստեփանոս վանքում ընդօրինակված մատյանները: Այս շրջանում նշանավոր է գրիչ և ծաղկող Սարգիս վարդապետ Շոռոթեցին, որի ընդօրինակությամբ մեզ են հասել 1694 թ. Պետրոս Արագոնեցու «Գիրք դատաստանացը» (ՄՄ, ձեռ. 484), 1696 թ. Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 4138), 1697 թ. Պատմագիրքը (Նոր Ջուղա, մասնավոր)<sup>2</sup>: Աստապատում ձեռագրեր են ընդօրինակել նաև Իսահակ գրիչը՝ Ավետարան, 1676 թ. (ՄՄ, ձեռ. 8567), Ստեփանոս գրիչը՝ Ժողովածու, 1690 թ. (ՄՄ, ձեռ. 7035) և Դիոնիսիոս Արեոպագացու երկերը, 1705 թ. (ՄՄ, ձեռ. 8063), Մարգար գրիչը՝ Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, 1681 թ. (ՄՄ, ձեռ. 6389), Ներսես աբեղան և Գրիգոր դպիրը՝ Ժողովածու, 1665-1669 թթ. (ՄՄ, ձեռ. 3468) և այլ շնորհաշատ գրիչներ:

Գրչության կենտրոններ են գործել նաև նախիջևանյան այլ բնակավայրերում: **Կուրքի** գյուղում 1471 թ. «ընդ հովանեաւ Սուրբ Հազարաբիրացս եւ Սուրբ Կաթողիկէիցս՝ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Ստեփաննոսի եւ գեղամիջի՝ Սուրբ Գրիգորիս եւ Սուրբ Նշանիս եւ այլ միահամուռ Վարդանանց Սուրբ նահատակացս»<sup>3</sup> Հակոբ, Թաթեոս և Մանվել գրիչները մի մեծադիր Հայսմավուրք են ընդօրինակել (ՄՄ, ձեռ. 1511): Իսկ 1478 թ. Կուրքիում Մանվել գրիչն ավարտում է Գանձարանի ընդօրինակությունը (ՄՄ, ձեռ. 4433):

**Աղբին** գյուղում՝ Ծիրանավոր Սուրբ Աստվածածին եկեղեցում, 1590 թ. Առաքել աբեղան ընդօրինակել է մի Ավետարան (Վենետիկ, ձեռ. 1192/172)<sup>4</sup>, իսկ մեկ այլ Ավետարան 1601 թ.՝ Վարդան գրիչը (ՄՄ, ձեռ. 4952): **Նորաշենիկ** գյուղում 1668 թ. Կոզմա գրիչն ավարտել է մի մեծադիր Հայսմավուրքի օրինակումը (ՄՄ, ձեռ. 3817):

Նախիջևանյան հոգևոր և գիտական, մանկավարժական կենտրոն-

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 363:

<sup>2</sup> Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Բ, կազմ.՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 190-191:

<sup>3</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, էջ 140:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, կազմ.՝ Հ. Բ. Վ. Սարգիսեան, Վենետիկ- Ս. Ղազար, 1914, էջ 719-722:



ներից էր **Քոնայի Սբ. Աստվածածին** վանքը: Այն հիմնադրվել է շուրջ 1330 թ. Թովմա Աքվինացու աշակերտ, կաթոլիկ վարդապետ Բարդուղիմեոս Մարաղացու և Գլաձորի համալսարանի սան Հովհաննես Քոնեցու ջանքերով: Կարճ ժամանակում վանքը վերածվում է գիտակրթական խորոշ կենտրոնի, ունենում գրչատուն, ուր ընդօրինակվում են բազմաթիվ մատյաններ<sup>1</sup>: Բարդուղիմեոս Մարաղացին հեղինակել է տրամաբանության դասագիրք, աստվածաբանական բնույթի երկեր, Քարոզգիրք և այլն: Դրանք հայերեն թարգմանելու համար նա բառացի փոխադրել է պարսկերենի, իսկ իր աշակերտ Հակոբ Քոնեցին վերածել հայերենի Քոնայի վանքում<sup>2</sup>: Հակոբ Քոնեցին Պետրոս Արագոնացու հետ հայերեն է թարգմանել նաև Կաթոլիկ Եկեղեցու Պատարագամատուցը, Ժամագիրքը, Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու, Պետրոս Արագոնացու մատենագրական ժառանգությունը. այդ մասին են վկայում թարգմանության հիշատակարանները<sup>3</sup>:

Հայ ունիթորական այս վանքի դեմ են պայքարել Հայոց միջնադարյան համալսարանի գործիչները՝ հատկապես Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և նրանց սաները: Գործունեության ամբողջ ընթացքում Հայոց միջնադարյան համալսարանը՝ իր աշակերտներով ու ավարտած սաների բացաժ դպրոցներով, տասնամյակներ շարունակ անհաշտ պայքարել է միարարության հետևորդների դեմ: Փաստ է նաև, որ հայ ունիթորների մի մասն էլ Գլաձորի սաներ էին, ու նրանց բացաժ կրթօջախներում՝ Հովհաննես Քոնեցու՝ Քոնայի, Հովհաննես Ծործորեցու՝ Ծործորի վանքերում, Ներսես Տարոնացու՝ Տարոնի դպրոցում, հայերեն է թարգմանվել և բազմիցս ընդօրինակվել կաթոլիկ վարդապետների մատենագրական հարուստ ժառանգությունը<sup>4</sup>:

Այսպիսով, Նախիջևանի ձեռագրական ժառանգության ուսումնասիրությունը հայագիտության կարևոր խնդիրներից է: Լինելով հայկական

<sup>1</sup> Այվազյան Ա., Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 86-90:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2020, էջ 52-54,

<sup>3</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, էջ 284-287, էջ 312-315, 387-388, 394-395, 411-412, 415, 448-449:

<sup>4</sup> Ա. Ղազարոսյան, Հայ գրչության կենտրոնները VIII-XIV դարերում, «Սուրբ Հայաստան» (ցուցահանդեսի կատալոգ), Երևան, 2007, էջ 251:

տարածք՝ 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված հայտնի պայմանագրով Նախիջևանը բռնակցվել է Ադրբեջանին, որի կազմում է մինչ օրս: Նշյալ տարածքները Խորհրդային տարիներին ամբողջովին հայաթափվել են, վանքերն ու եկեղեցիները վերջին տասնամյակներին հիմնահատակ ավերվել: Ջուղայի հայկական գերեզմանոցը՝ հայտնի խաչքարադաշտով, տարիներ առաջ հիմնովին ջարդուկոտոր արվեց և ոչնչացվեց Ադրբեջանական կառավարության հրամանով: Նախիջևանի տարածաշրջանում դարեր շարունակ ծավալված հայկական մշակութային կյանքի վկաներն այսօր այնտեղ ստեղծված և մեզ հասած ձեռագրերն են:

***Քանայի քաներ** - Նախիջևան, գրչության կենտրոն, ձեռագիր, Ագուլիս, Ջուղա, Ասրապատ, Շոռոթի վանք, Քանայի վանք*

## СКРИПТОРИИ НАХИЧЕВАНА

***Արпеник Казаросян, Лусине Туманян***

***Ключевые слова** - Нахичевань, скриптория, рукопись, Агулис, Джуга, Астапат, монастырь Шорот, монастырь Крна.*

На протяжении всей своей истории в регионе Нахичевань было много скрипторий (центров письма). Здесь было написано и проиллюстрировано множество рукописей. Были известны скриптории городов Нахичевань, Агулис, Джуга и Астапат, скриптории сел Куки и Норашеник, Агбин. В 17 веке монастыри Шарапонк и Апракунис были знаменитыми, от которых мы имеем богатое рукописное наследие.

Славился монастырь Шорот, где монахини писали рукописи. Помимо монастырей Армянской Апостольской церкви, в Нахичевани в Крне существовал также армянский католический монастырь, где писались рукописи. Изучение рукописного наследия Нахичевани - одна из важных проблем арменоведения. Сегодня Нахичевань лишен армян, армянские монастыри и хачкары разрушены. Дошедшие до нас рукописи - свидетельства армянской культуры, веками создававшейся в Нахичевани.

## SCRIPTORIA OF NAKHICHEVAN

*Arpenik Ghazarosyan, Lusine Tumanyan*

**Keywords** - *Nakhichevan, scriptorium, manuscript, Agulis, Jugha, Astapat, Shorot monastery, Qrna monastery*

Throughout its history, the Nakhichevan region has had many scriptoria (writing centers). Many manuscripts were written and illustrated there. There were known scriptoria of Nakhichevan, Agulis, Dzhuga and Astapat cities, scriptoria of Kuqi and Norashenik villages, Aghbin. In the 17th century, the Sharaponk and Aprakunis monasteries were famous, from which we have a rich manuscript heritage.

Shorot monastery was famous, where nuns also wrote manuscripts. In addition to the monasteries of the Armenian Apostolic Church, there was also an Armenian Catholic monastery in Nakhichevan in Qrna, where manuscripts were wrote. The study of the manuscript heritage of Nakhichevan is one of the important problems of Armenology. Today Nakhichevan is deprived of Armenians, Armenian monasteries and khachkars have been destroyed. The manuscripts that have come down to us are witnesses of the Armenian culture that has been created for centuries in Nakhichevan.

**Արփենիկ Ղազարոսյան** - պատմ. գիտ. թեկն., Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիրաշխարհող

**Арпеник Казаросян** - кандидат исторических наук, старший сотрудник Матенадарана-института древних рукописей имени Месропа Маштоца

**Arpenik Khazarosyan** - PhD in History, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots

**Լուսինե Թումանյան** - պատմ. գիտ. թեկն., Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիրաշխարհող, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի ասիստենտ

**Лусине Туманян** - кандидат исторических наук, старший сотрудник Матенадарана-института древних рукописей имени Месропа Маштоца, ассистент кафедры Истории Армянской церкви и Экклесиологии ЕГУ Факультета Богословия

**Lusine Tumanyan** - PhD in History, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots, Associate of chair of Armenian Church History and Ecclesiology at the YSU Faculty of Theology